© 2018. Ուղեցույցը մշակվել և տպագրվել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Նախազորակոչային տարիքի երիտասարդների իրազեկում ԶՈՒ-ում մարդու իրավունքների թեմայի շուրջ» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանում ԱՄՆ դեսպանության Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:

Տեսակետները, կարծիքներն ու եզրակացությունները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ պետդեպարտամենտի դիրքորոշումները:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հեղինակներ՝ Էդգար Խաչատրյան, Արթուր Սուքիասյան

Խմբագիրներ՝ Վահագն Անտոնյան, Արմեն Սարգսյան

Նկարազարդում՝ Նարեկ Կարդաշյան

Քայլ առ քայլ ուղեցույց ապագա զորակոչիկների համար

Վանաձոր, 2018

© 2018. «Խաղաղության երկխոսություն» ՀԿ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր; Սյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am; mailbox@peacedialogue.am
URL: http://www.peacedialogue.am; http://www.safesoldiers.am

© 2018. Նկարազարդումը՝ Նարեկ Կարդաշյանի

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Քայլ առ քայլ ուղեցույց
ապագա զորակոչիկների համար

© 2018. «Խաղաղության երկխոսություն» ՀԿ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
2002, ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40,
«ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: http://www.peacedialogue.am;
http://www.safesoldiers.am

© 2018. Ուղեցույցը մշակվել և տպագրվել է
«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության
«Նախազորակոչային տարիքի երիտասարդների իրազեկում ՋՈՒ-ում
մարդու իրավունքների թեմայի շուրջ» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանում ԱՄՆ
դեսպանության Ժողովրդավարության հանձնաժողովի
փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:

**Տեսակետները, կարծիքներն ու եզրակացությունները
հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն
ԱՄՆ պետդեպարտամենտի դիրքորոշումները:**

Հեղինակներ՝

Էդգար Խաչատրյան՝«Խաղաղության երկխոսություն» հկ-ի նախագահ

Արթուր Սուքիասյան՝ փաստաբան, «Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության «Նախազորակոչային տարիքի
երիտասարդների իրազեկում ՋՈՒ-ում մարդու իրավունքների թեմայի շուրջ»
ծրագրի փորձագետ

Խմբագիրներ՝

Վահագն Անտոնյան՝ «Խաղաղության երկխոսություն» հկ-ի մարդու
իրավունքների ծրագրերի համակարգող

Արմեն Սարգսյան՝ մեդիա փորձագետ

Նկարազարդում՝

Նարեկ Կարդաշյան

Վանաձոր, 2018

Բովանդակություն

Նախաբան 5

Ինչ նպատակով և ում համար է մշակվել ուղեցույցը 5
Ինչ իրավական փաստաթղթերի վրա է հիմնված ուղեցույցը 6

Հարցեր և պատասխաններ զինվորական ծառայության, դրա կազմակերպման գործընթացի և ծառայության ընթացքում քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին 9

1. Ինչ է պարտադիր զինվորական ծառայությունը 9
2. Ո՞վ է անցնում պարտադիր զինվորական ծառայություն 9
3. Որքա՞ն է պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 9
4. Ինչպե՞ս է հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետը 10
5. Ինչ է զորակոչը 13
6. Գոյություն ունի՞, արդյոք, պարտադիր զինվորական ծառայությանն այլընտրանք 13
7. Որո՞նք են այլընտրանքային ծառայության անցնելու հիմքերը և կարգը 14
8. Ինչպե՞ս կարելի է ձեռք բերել զինվորական մասնագիտություն 14
9. Իրավունքների և ազատությունների պաշտպանության ի՞նչ երաշխիքներ ունեն զինծառայողները 17
10. Առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն 18
11. Ինչպե՞ս է որոշվում զինապարտի կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար 21
12. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու արգելքները 21
13. Ո՞ր դեպքերում քաղաքացին կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից 22
14. Որո՞նք են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքերը 22
15. Հնարավո՞ր է, արդյոք, ծառայել եղբոր հետ նույն զորամասում 23
16. Ինչ կարգով է որոշվում զինծառայողի ծառայության վայրը 23
17. Մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու արգելքը 23
18. Ինչ անել, եթե զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի մոտ առաջացել են բողոքներ առողջական վիճակի վերաբերյալ 25
19. Կարո՞ղ են, արդյոք, զինծառայողները գնալ արձակուրդ 26
20. Զինծառայողների հիմնական արձակուրդի իրավունքը 26
21. Զինծառայողների լրացուցիչ արձակուրդի իրավունքը 26
22. Զինծառայողներին հիվանդության պատճառով տրվող արձակուրդի իրավունքը 28
23. Զինծառայողների ամսական արձակուրդի իրավունքը 28
24. Զինծառայողների արձակման իրավունքը 28
25. Ինչպե՞ս է կարգավորվում վնասի հատուցման ընթացակարգը, եթե զինծառայողի հերթապահության ժամանակ վնասվել կամ գողացվել է պետական գույք 29
26. Ինչ կարգով է բողոքարկվում վերադասի հրամանը 31
27. Ինչ է կարգապահական տույժը 31
28. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը ռազմական ոստիկանության և քննչական մարմինների հետ հարաբերություններում 32
29. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը վկայի կարգավիճակում 34
30. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը տուժողի կարգավիճակում 35
31. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակներում 35
32. Ո՞ր դեպքերում զինծառայողը կարող է բերման ենթարկվել 36
33. Որքա՞ն կարող է տևել հարցաքննությունը 36
34. Ինչ կարգով է իրականացվում զորացրումը 36
35. Ինչ է նշանակում պահեստազոր 38
36. Ինչ մեխանիզմներ կան զինված ուժերում ծառայության զորակոչվելու և զինվորական ծառայության մեջ գտնվելու ընթացքում սեփական իրավունքները պաշտպանելու համար 38
37. Որո՞նք են այն կառույցները կամ ընթացակարգերը, որոնց միջոցով կարելի է վերականգնել խախտված իրավունքները, ինչպե՞ս և ո՞ր դեպքերում կարելի է նրանց դիմել 39

Հավելվածներ **40**

Հավելված 1. Որո՞նք են զինված ուժերի անդամներին առնչվող մարդու իրավունքներն՝ ըստ ԵԽ առաջարկությունների 40
Հավելված 2. ՀՀ պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքելը և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելը 41
Հավելված 3. Ռազմաուսումնական հաստատությունում սովորելու հետ կապված կարգավորումներ 42
Հավելված 4. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալը 42
Հավելված 5. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալը 43
Հավելված 6. Նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու հիմքերը 45
Հավելված 7. Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու համար արգելք հանդիսացող, ինչպես նաև լրացուցիչ արձակուրդի իրավունք տվող ընտանեկան պայմաններ 45
Հավելված 8. Պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու հիմք հանդիսացող ընտանեկան պայմաններ 46
Հավելված 9. Կառույցներ, ուր կարելի է ներկայացնել բողոքներ զորակոչի կամ զինվորական ծառայության ընթացում իրենց կամ իրենց հարազատների իրավունքների ոտնահարման դեպքերը կանխելու համար 47
Հավելված 10. Դիմում բողոքի օրինակելի ձև 49
Հավելված 11. Ո՞ր արարքներն են համարվում զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններ 50

Իրավական հիմքեր 51

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության մասին 56

Նախաբան

Ինչ նպատակով և ո՞ւմ համար է մշակվել ուղեցույցը

Հարգելի ընթերցող,

Այս ուղեցույցը գործնական գիտելիքներ է տալիս ապագա զինվորներին՝ զորակոչի և զինվորական ծառայության ընթացքում սեփական իրավունքները պաշտպանելու համար: Վերջին տարիներին Հայաստանում գործող մի շարք կազմակերպություններ, միջազգային կառույցներ, փորձագիտական խմբեր զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ բազմաթիվ ուղեցույցներ ու ձեռնարկներ են հրապարակել, սակայն, նմանատիպ, քայլ առ քայլ ուղեցույցի անհրաժեշտություն զգացվեց նախազորակոչային տարիքի երիտասարդների և նրանց ընտանիքների հետ «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության աշխատանքի արդյունքում: Մինչ այժմ հրապարակված ուսումնական ձեռնարկներն ու ուղեցույցները հիմնականում ուղղված են եղել մարդու իրավունքների ոլորտում զինված ուժերի սպայական անձնակազմի վերապատրաստմանը: Այս ուղեցույցը մշակվել է թե՛ ապագա զորակոչիկների, թե՛ նրանց ընտանիքների անդամների համար՝ զորակոչի կամ զինվորական ծառայության ընթացքում իրենց հարազատների իրավունքների ոտնահարման դեպքերն ըստ անհրաժեշտության կանխելու համար: Միևնույն ժամանակ, այն օգտակար նյութ կարող է լինել զինված ուժերում մարդու իրավունքների ոլորտում ներգրավված հասարակական կազմակերպությունների աշխատակիցների, մարդու իրավունքները կարևորող ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու համար:

Ուղեցույցը կազմվել է տարիների ընթացքում «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպություն դիմած քաղաքացիների հարցադրումների հիման վրա: Ըստ այդմ, հեղինակները փորձել են նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդներին առավել մատչելի և հասկանալի ձևով ներկայացնել իրենց իրավունքները պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, նաև բուն ծառայության ընթացքում:

Բացի այդ, ուղեցույցի կարևոր մաս կազմող հավելվածներում ներկայացված են այս կամ այն կետի վերաբերյալ օրենքի տառից բխող պարզաբանումներ, արագ արձագանման որոշակի գործիքների վերաբերյալ առաջարկներ, որոնք հնարավորություն կտան պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող քաղաքացիներին և նրանց հարազատներին կոնկրետ գործողություններ իրականացնել ծառայության ընթացքում իրենց կամ իրենց հարազատների իրավական պաշտպանվածությունն ապահովելու համար:

Ուղեցույցի «լեզուն» ավելի շատ իրավական ու իրավաբանական է, բայց օգտագործվող տերմինները և արտահայտությունները շատ կարևոր են իրավունքները պատկերացնելու և դրանք պաշտպանելու համար: Հեղինակները խորհուրդ չեն տալիս «անգիր» սովորել այն, այլ ունենալ

ձեռքի տակ՝ նշված կետը կամ հավելվածն արագորեն վերընթերցելու կամ հիշողությունը թարմացնելու համար:

Հարկ է նշել, որ ուղեցույցի նախապատրաստման աշխատանքներում ներգրավվել են նաև Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, պաշտպանության նախարարության, ինչպես նաև կրթության և գիտության նախարարության մասնագետները. ուղեցույցում տեղ գտած նյութերը պարբերաբար ուղարկվել են այս պետական մարմիններին՝ համապատասխան մասնագետների փորձագիտական եզրակացությունները և առաջարկությունները նյութում ներառելու նպատակով:

Կարևորում ենք նաև այն փաստը, որ Dasaran.am կայքի մեր գործընկերներն իրենց պատրաստակամությունն են հայտնել աջակցել ուղեցույցի տարածման գործում և նյութերի հիման վրա պատրաստելու են առցանց խաղ՝ կայքի «Ես գիտեմ իմ իրավունքները» խորագրի ներքո:

Ինչ իրավական փաստաթղթերի վրա է հիմնված ուղեցույցը

Ժամանակակից աշխարհում պետությունների մեծ մասը պաշտպանությունը կազմակերպում է ազգային զինվորական ծառայության միջոցով և օրենքով սահմանափակված ժամանակահատվածում քաղաքացիների՝ իրենց երկրին ծառայելու պարտավորության հիման վրա:

Եվրոպայի խորհուրդը (ԵԽ, որի 47 անդամ պետություններից մեկն է Հայաստանի Հանրապետությունը) զինակոչիկներին առնչվող մարդու իրավունքների մասին մի շարք բանաձևերում անդամ պետություններին կոչ է անում թույլատրել զինակոչիկներին օգտվել իրենց քաղաքացիական և սոցիալական իրավունքներից հավասարապես, այսինքն՝ բանակում ունենալ «համազգեստով քաղաքացի»:

Ըստ ԵԽ «Զինակոչիկներին առնչվող մարդու իրավունքների» թիվ 1166 (1998)[1] բանաձևի, զինակոչիկները, այլ քաղաքացիների նման, պետք է օգտվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի* իրավական պաշտպանության նույն միջոցներից, իրավունքներից և հիմնարար ազատություններից:

Իհարկե, որոշակի հանգամանքներում կամ զինվորական կարգապահության պահանջներից

* *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան միջազգային համաձայնագիր է, որը կարգավորում է Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում մարդկանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը: Այդ համաձայնագրի ամբողջական անվանումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա» է:*

ելնելով պետությունները կարող են սահմանափակել այդ ազատությունները, բայց դրանով հանդերձ պարտավոր են խստորեն հարգել կոնվենցիան:

Թույլատրելի սահմանափակումները նույնպես նախատեսված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մինչ այդ արձակած, այսինքն արդեն նախադեպային* դարձած իրավական վճիռներով:

Նույն թիվ 1166 (1998)[1] բանաձևում ԵԽ անդամ պետություններին առաջարկվում է փոփոխություններ կատարել իրենց օրենսդրության կամ գործելակերպի մեջ, եթե սահմանափակումները չեն համապատասխանում կոնվենցիայով նախատեսված չափանիշներին:

Ուղեցույցը մշակելու ընթացքում հեղինակները հիմնականում առաջնորդվել են Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ նախատեսված զինծառայողների իրավական պաշտպանվածությունն ապահովող մեխանիզմներով: Ինչպես արդեն նշվեց վերևում, դրանք չեն կարող սկզբունքորեն հակասել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի թույլատրելի սահմանափակումներին:

Այս ուղեցույցում ներկայացված հարցերի պատասխանները գտնելու համար հեղինակներն ուսումնասիրել և վերլուծել են ՀՀ Սահմանադրությունը, զինված ուժերում ծառայելու ընթացքում քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները սահմանող և կարգավորող ազգային օրենքներ և իրավական այլ փաստաթղթեր:

* *Նախադեպը դատարանի կողմից ստեղծված իրավունքի այնպիսի դիրքորոշում է, որը ստեղծվել է որոշակի գործի քննության շրջանակներում, և որով հետագայում պետք է ղեկավարվեն դատարանները՝ նույնանման հանգամանքներով գործեր քննելիս:*


18
ՏԱՐԵԿԱՆ
27
ՏԱՐԵԿԱՆ

Հարցեր և պատասխաններ զինվորական ծառայության, դրա կազմակերպման գործընթացի և ծառայության ընթացքում քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին

1. Ի՞նչ է պարտադիր զինվորական ծառայությունը

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պետության պաշտպանությանը կարող են մասնակցել տարբեր ձևերով: Հիմնականը՝ պարտադիր զինվորական ծառայությունն է: Քաղաքացիները զորակոչվում են պարտադիր զինվորական ծառայության և դրա ընթացքում համարվում զինծառայող:

2. Ո՞վ է անցնում պարտադիր զինվորական ծառայություն

Պարտադիր զինվորական ծառայության ներգրավվում են 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ զորակոչի միջոցով:

Եթե որոշակի պատճառներով քաղաքացին 18 տարեկանում զինվորական ծառայության չի զորակոչվում, ապա կարող է զորակոչվել ավելի ուշ՝ մինչև 27 տարին լրանալը: 27 տարին լրանալուց հետո քաղաքացին պարտադիր զինվորական ծառայության այլևս չի զորակոչվում:

Եթե 27 տարեկան արական սեռի քաղաքացին բարձրագույն ուսումնական հաստատությունում (ԲՈՒՀ) սովորելու ընթացքում անցել է զինվորական պատրաստություն և որակավորվել որպես պահեստազորի սպա, ապա կարող է ներգրավվել պարտադիր զինվորական ծառայության՝ մինչև 35 տարին լրանալը:

3. Որքա՞ն է պարտադիր զինվորական ծառայության ժամկետը

Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից:

Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 24 ամիս:

* *Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:*

ԲՈՒՀ-ում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած, պահեստազորի սպայական կազմ որակավորված անձանց ծառայության ժամկետը ևս 24 ամիս է:

Եթե պարտադիր զինծառայողը ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքել է պայմանագիր և զինվորական ծառայության անցել պաշտպանության նախարարության կողմից նշված պայմաններով, նշանակված վայրում, ապա պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 36 ամիս (տես՝ հավելված 2):

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած, բայց ռազմաուսումնական հաստատություններ ընդունված անձանց համար պարտադիր ծառայության ժամկետ է համարվում տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետը:

4. Ինչպե՞ս է հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետը

Ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը՝ օրացուցային հաշվարկով:

Զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում զինծառայողի՝

- ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը,
- ձերբակալման կամ որպես խափանման միջոց* կիրառված կալանավորման ժամանակահատվածը[1],
- զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու ժամանակահատվածը,
- օրենքով սահմանված կարգով ապացուցված ինքնախեղման կամ դիտավորությամբ առողջական վիճակը վատթարացնելու հետևանքով բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածները,
- զինծառայողի պահանջով իր առողջական վիճակի կրկնակի հետազոտման մեջ գտնվելու ժամանակահատվածը, այն դեպքում, եթե հետազոտման արդյունքներով բուժման անհրաժեշտությունը բացակայում է:

1. Եթե զինծառայողն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ, ապա վերը նշված դեպքերի ժամանակահատվածը հաշվարկվում է որպես զինվորական ծառայություն:


2010
2013
2014
2015
2016
2017
2018
2019


ԶՈՐՔԿՈՉ

Ռազմաուսումնական հաստատություններից կարգապահական տույժի կարգով, անբավարար առաջադիմության կամ ուսումնառությունից հրաժարվելու պատճառով հեռացված կուրսանտները ուղարկվում են պարտադիր զինվորական ծառայության՝ չծառայած ժամկետը շարունակելու:

Պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում զինծառայողը ուղարկվում է պարտադիր զինվորական ծառայության՝չծառայած ժամկետը շարունակելու:

Օրենքի խախտմամբ պայմանագրային զինվորական ծառայություն անցած լինելու ժամանակահատվածը նույնպես չի հաշվարկվում:

ՊՆ-ի հետ պայմանագիր կնքած անձանց ամսական արձակուրդում գտնվելու օրերը չեն հաշվառվում զինվորական ծառայության ժամկետում, եթե նրանք հրաժարվում են պայմանագրից:

ԲՈՒՀ-երում ռազմաբժշկական ֆակուլտետում ուսումնառություն անցած կամ անցնող զինծառայողները պարտավորվում են զինվորական ծառայության պայմանագրից հրաժարվելու դեպքում վճարել տվյալ մասնագիտության ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը:

5. Ինչ է զորակոչը

Զորակոչը գործընթաց է, որի միջոցով անձը կանչվում և ներգրավվում է պարտադիր զինվորական ծառայության: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է տարեկան ոչ պակաս, քան երկու անգամ (ամառային և ձմեռային զորակոչեր):

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով պետությունը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին:

Քաղաքացիները պարտավոր են ծանուցման մեջ նշված ժամկետում ներկայանալ իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մոտակա զինվորական կոմիսարիատ:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու պարտականության խախտումը կարող է առաջացնել քրեական պատասխանատվություն:

Օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները չեն կարող ընդունվել հանրային ծառայության, չեն կարող անցնել պայմանագրային զինվորական ծառայության:

6. Գոյություն ունի՞, արդյոք, պարտադիր զինվորական ծառայությանն այլընտրանք

Պարտադիր զինվորական ծառայությունը կարող է փոխարինվել

այլընտրանքային զինվորական ծառայությամբ կամ այլընտրանքային աշխատանքային ծառայությամբ:

Այլընտրանքային զինվորական ծառայության կարող է անցնել այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին ընդհանրապես հակասում է զինվորական ծառայությունը:

Պարտադիր զինվորական ծառայություն անցնող ՀՀ քաղաքացին, ըստ օրենսդրության, չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքայինը, իսկ այլընտրանքային ծառայություն անցնողը չի կարող հրաժարվել և ընտրել պարտադիրը:

7. Որո՞նք են այլընտրանքային ծառայության անցնելու հիմքերը և կարգը

Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու համար դիմել է իր հաշվառման զինկոմիսարիատ՝ մինչև հերթական զորակոչին նախորդող հունիսի 1-ը (մինչ ամառային զորակոչի մեկնարկը) կամ նոյեմբերի 1-ը (մինչ ձմեռային զորակոչի մեկնարկը):

Դրա համար անհրաժեշտ է այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի համապատասխան որոշումը:

Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 30 ամիս:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը սահմանվում է 36 ամիս:

8. Ինչպե՞ս կարելի է ձեռք բերել զինվորական մասնագիտություն

18 տարին չլրացած, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա մինչև 23 տարեկան քաղաքացիները, զինծառայողները կարող են մասնակցել ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը:

Ռազմաուսումնական հաստատություններում սովորող անձինք ձեռք են բերում զինվորականի մասնագիտություն (տես՝ հավելված 3):

Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիներն ուսումնառության ընթացքում համարվում են ժամկետային պարտադիր զինծառայողներ, նրանց վրա տարածվում են ժամկետային պարտադիր զինծառայության օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

9. Իրավունքների և ազատությունների պաշտպանության ինչ երաշխիքներ ունեն զինծառայողները

Ժամանակակից աշխարհում լայնորեն տարածված է «համազգեստով քաղաքացի» հասկացությունը: Դրա հիմքում մեկ գաղափար է. զինվորականները պետք է օգտվեն միևնույն հիմնարար ազատություններից, նրանց իրավունքներն ու արժանապատվությունը պետք է պաշտպանված լինեն այնպես, ինչպես ցանկացած այլ քաղաքացունը՝ հաշվի առնելով զինվորական ծառայության պայմաններից բխող սահմանափակումները:

Իրավունքների և ազատությունների պաշտպանության համար զինծառայողներն ունեն մի շարք երաշխիքներ:

Դրանցից են.

- **զինծառայողները գտնվում են պետության պաշտպանության տակ,**
- **զինծառայողների կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը պահպանվում են օրենքով,**
- **զինծառայողին անվանարկելը, սպառնալիքը, բռնությունը կամ ոտնձգությունը նրա կյանքի, առողջության, իրավունքների, ունեցվածքի նկատմամբ, ինչպես նաև զինծառայողի վրա դրված պարտականությունների կատարմանը խոչընդոտող այլ գործողությունները առաջացնում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն,**
- **զինվորական ծառայությունը կազմակերպվում է զինծառայողների իրավունքների և ազատությունների առաջնահերթության սկզբունքով,**
- **պետությունն ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավական ու սոցիալական պաշտպանվածությունը:**

Պարտադիր ժամկետային զինծառայողները ունեն նաև Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու և համապետական հանրաքվեին* մասնակցելու իրավունք:

* *Հանրաքվեն համապետական, տարածաշրջանային կամ տեղական նշանակության հարցերի վերաբերյալ քաղաքացիների քվեարկության ձևով ազատ կամարտահայտման միջոց է:*

10. Առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն

ՀՀ քաղաքացիներին զինվորական հաշվառման* վերցնելիս, ինչպես նաև զորակոչելիս իրականացվում է նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:

Այս դեպքում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում է առաջնահերթ և անվճար:

Քաղաքացին իրավունք ունի.

- ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին,
- ստանալ դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը:

Այս տեղեկությունները քաղաքացին կարող է բժշկական հանձնաժողովից պահանջել գրավոր, պատշաճ փաստաթղթային տեսքով:

Իր առողջական վիճակի կամ հետազոտության արդյունքում տրված եզրակացության վերաբերյալ քաղաքացին կարող է.

- ներկայացնել առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ,
- բողոքարկել տրված եզրակացությունը:

Հանրապետական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների իրավասու բժշկական հանձնաժողովների, զինվորական կոմիսարիատների գործունեության, դրանց կայացրած որոշումների (տրված եզրակացությունների) վերաբերյալ բողոքներ ներկայացնելու դեպքում որոշումների կատարումը չի կասեցվում, և դրանք ենթակա են կատարման մինչև վերանայումը:

Զորակոչային հանձնաժողովների, իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների որոշումները, եզրակացությունները կայացման օրվանից հետո եռօրյա ժամկետում տրվում են քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին:

Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

* *Զինվորական հաշվառումը զինվորական կոմիսարիատների կողմից զորակոչի ենթակա անձանց անձնական տվյալների հավաքագրման, անձնական գործերի ուսումնասիրության և հաստատման գործընթացն է:*


Ինչ բողոքներ ունեք

ԳԻՏՍՈՒՄԷ

11. Ինչպե՞ս է որոշվում զինապարտի կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար

Բժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա քաղաքացուն տրվում է առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն: Այն առնվազն պետք է ներառի նրա առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը և զինվորական ծառայության պիտանիության աստիճանը:

Կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ արվում են հետևյալ նշումները.

1. պիտանի է զինվորական ծառայության համար,
2. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
3. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,
4. ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,
5. ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,
6. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,
7. կարիք ունի բուժման,
8. ենթակա է կանչվելու վարժական հավաքի,
9. ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի:

Զինծառայողի առողջական վիճակին հակացուցված, այսինքն՝ վտանգավոր պայմանները սահմանված են ՀՀ կառավարության որոշմամբ: Ըստ դրա՝ գործում են կարգավորումներ, որոնցից մի քանիսն են.

- զորամասի բժշկի կողմից չթույլատրվող ֆիզիկական վարժություններ,
- ծառայության որոշակի խնդիրներ կատարելու սահմանափակում,
- «Ծառայություն հեշտացված օրվա կարգացուցակով» բնութագիր՝ կրճատված պարապմունքներով և երկարացված հանգստի ժամերով,
- ծառայության ընթացքում փորձաքննություն՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ,
- «Հակացուցված է ծառայությունը խոնավ և ցուրտ եղանակային պայմաններում անընդմեջ երկու ամիս և ավելի ժամկետով» բնութագիր՝ զորանոցային պայմաններից դուրս գտնվելու դեպքերում (ճամբարային հավաքներ, զորավարժություններ, մարտական հերթապահություն և այլն):

12. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու արգելքները

Պարտադիր զինվորական ծառայության ենթակա չէ այն քաղաքացին, ով նախկինում դատապարտվել է ազատազրկման ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների, առնվազն երկու անգամ դիտավորությամբ կատարած հանցագործությունների համար և ազատազրկման ձևով պատիժ է կրել երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

Պարտադիր զինվորական ծառայության չի կարող զորակոչվել այն անձը,

ով պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձևով, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում: Բացառություն են կազմում դեպքերը, երբ քրեական հետապնդումն իրականացվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով, և եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության:

13. Ո՞ր դեպքերում քաղաքացին կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից

Անձն ունի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք հետևյալ դեպքերում.

- զինվորական ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվել առողջական վիճակի պատճառով,
- մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը նվազագույնը 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում, նվազագույնը 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն այլ երկրում:
- ընտանեկան պայմաններից ելնելով ստացել է տարկետում, այսինքն՝ զորակոչի ժամանակավոր հետաձգման իրավունք, և այդ իրավունքը պահպանել է մինչև 27 տարեկանը:
- ընտանիքի միակ արու զավակն է և ունի ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:

Քաղաքացին կարող է նաև բացառիկ դեպքերում ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ ՀՀ կառավարության որոշմամբ:

Եթե ՀՀ քաղաքացին ընդունում է նաև այլ պետության քաղաքացիություն, ապա չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից՝ անկախ տվյալ պետությունում ծառայած լինել-չլինելու հանգամանքից:

14. Որո՞նք են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքերը

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող անձը զորակոչից տարկետման իրավունք ունի հետևյալ դեպքերում.

1. առողջական վիճակի պատճառով (տես՝ հավելված 4),
2. ընտանեկան պայմաններից ելնելով (հավելված 5),
3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու դեպքում՝ պատգամավորական լիազորությունների ողջ ժամկետով,
4. նպատակային ուսումնառության համար (հավելված 6),
5. գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի

բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Վերը նշված 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով տարկետում ստացած քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել տարկետման իրավունքից և ինքնակամ զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

15. Հնարավո՞ր է, արդյոք, ծառայել եղբոր հետ նույն զորամասում

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված եղբայրներն իրենց ցանկությամբ ծառայության են նշանակվում նույն զորամասում:

Պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքայինը իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության զորամասում, եթե եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը:

16. Ի՞նչ կարգով է որոշվում զինծառայողի ծառայության վայրը

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրերը նշանակվում են կենտրոնացված ձևով (այսինքն մեկ վայրում՝ կենտրոնական հավաքակայանում) և վիճակահանությամբ:

Ծառայության վայրեր նշանակելիս հաշվի են առնվում կրթությունը, զինվորական ծառայության պիտանիության աստիճանը, օրենքով սահմանված այլ պայմաններ:

Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում զինծառայողները կարող են տեղափոխվել ծառայության մեկ այլ վայր:

Պարտադիր զինծառայողն իրավունք ունի ՀՀ ՊՆ հետ պայմանագիր կնքել և ծառայություն անցնել նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում (տես՝ հավելված 2):

Պարտադիր զինծառայողը նաև իրավունք ունի ծառայության ընթացքում անցնել պայմանագրային զինվորական ծառայության՝ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում:

17. Մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու արգելքը

Ծառայության վայրեր նշանակված շարքային կազմի պարտադիր զինծառայողները մինչ զինվորական երդում տալը համարվում են նորակոչիկներ: Նորակոչիկները չեն կարող ընդգրկվել մարտական հերթապահության մեջ կամ ներգրավվել ռազմական գործողություններում:

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ընթացքում գործում են մարտական հերթապահության մեջ ընդգրկելու սահմանափակումներ ընտանեկան պայմանների հիմքով (տես՝ հավելված 7)։ Դրանք, սակայն, չեն գործում, եթե զինծառայողը ցանկություն է հայտնել ընդգրկվելու մարտական հերթապահության մեջ կամ անցել է պայմանագրային զինծառայության։

Եթե կա առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն՝ ծառայության պիտանիության սահմանափակումով, և այդ սահմանափակումն արգելք է հանդիսանում մարտական հերթապահությանը կամ ռազմական գործողությանը մասնակցելու համար, ուրեմն զինծառայողը չի կարող ներգրավվել այդ գործողություններում։

Արգելվում է մարտական հերթապահության նշանակել նաև այն զինծառայողներին, որոնք հանձնված են հրամանատարության հսկողությանը՝ որպես իրենց նկատմամբ քրեական գործի վարույթի խափանման միջոց։

18. Ի՞նչ անել, եթե զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի մոտ առաջացել են բողոքներ առողջական վիճակի վերաբերյալ

Զինծառայողը պետք է հոգ տանի իր առողջության համար և չպետք է թաքցնի հիվանդությունները։ Առողջական խնդիրներ ունեցող զինծառայողը բուժման իրավունք ունի։

Հիվանդանալու դեպքում պարտավոր է այդ մասին անմիջապես զեկուցել անմիջական պետին և նրա թույլտվությամբ դիմել գնդի բուժկետ՝ բժշկական օգնություն ստանալու համար։

Առավոտյան ստուգման ընթացքում վաշտի հերթապահը գրանցում է բուժօգնության կարիք ունեցողներին հիվանդների գրանցման գրքում՝ նրանց գնդի բուժկետ ուղարկելու համար։

Հանկարծակի հիվանդացած կամ վնասվածք ստացած զինծառայողներն օրվա ցանկացած ժամին անհապաղ ուղարկվում են գնդի բուժկետ։

Ձնում անցնելուց հետո հիվանդները բուժման են ուղարկվում գնդի բուժկետ կամ գնդից դուրս գտնվող բուժհիմնարկ (հոսպիտալ, հիվանդանոց)։ Հիվանդության բնույթից ելնելով նշանակվում է նաև ամբուլատոր բուժում։

Արձակուրդի կամ գործուղման ժամանակ հիվանդացած զինծառայողներին ստացիոնար բուժման են ուղարկում զինվորական պարետները կամ զինվորական կոմիսարները։

Զինծառայողներն ու նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ։

19. Կարո՞ղ են, արդյոք, զինծառայողները գնալ արձակուրդ

Պարտադիր զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.

1. հիմնական,
2. լրացուցիչ,
3. հիվանդության պատճառով (վերականգնողական),
4. ամսական:

Արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար տրվում է անհրաժեշտ ժամանակ՝ մինչև երկու օրացուցային օր ընդհանուր ժամկետով:

Զինծառայողները Հայաստանի Հանրապետության տարածքում ունեն քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից անվճար երթևեկելու իրավունք՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից):

Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելու և վերադառնալու զինծառայողների տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են:

20. Զինծառայողների հիմնական արձակուրդի իրավունքը

Պարտադիր զինծառայողներին հիմնական արձակուրդ տրվում է ծառայության ընթացքում մեկ անգամ՝ ոչ պակաս, քան հինգ ամիս օրացուցային ծառայության դեպքում:

Արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելիս հաշվի է առնվում նաև զինծառայողի բարեխիղճ ծառայությունը:

Հիմնական արձակուրդ տրվում է՝

1. շարքային կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 10 օրացուցային օր,

2. կրտսեր ենթասպայական կազմի (կրտսեր սերժանտ, սերժանտ, ավագ սերժանտ, ավագ) զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 15 օրացուցային օր:

21. Զինծառայողների լրացուցիչ արձակուրդի իրավունքը

Պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է հինգ օրացուցային օր տևողությամբ՝

1. զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշները խրախուսելու համար

ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՀԱԿ

2. ընտանեկան իրադարձությունների կամ դեպքերի ժամանակ՝ զինծառայողի երեխայի ծնունդ կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնություն, ծանր հիվանդություն կամ մահ,

3. օրենքով նախատեսված որոշակի ընտանեկան պայմաններ ունեցողներին՝ վեց ամիսը մեկ անգամ (տես՝ հավելված 7):

22. Զինծառայողներին հիվանդության պատճառով տրվող արձակուրդի իրավունքը

Պարտադիր զինծառայողներին կարող է տրվել հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ՝ բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար:

Արձակուրդի որոշումը կայացնում է բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատությունը կամ զորամասի հրամանատարը (պետը)՝ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի տեղեկանքի հիման վրա:

Պարտադիր զինծառայողների բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել անընդմեջ 90 օրացուցային օրը:

Բուժման ավարտից հետո պարտադիր զինծառայողներն անցնում են ռազմաբժշկական փորձաքննություն, որի արդյունքներով հանձնաժողովը կարող է երկարաձգել բուժման ժամկետը կամ սահմանել վերականգնողական ժամկետ՝ մինչև 30 օրացուցային օրով:

Եթե պարտադիր զինծառայողը հիվանդացել է հիմնական կամ լրացուցիչ արձակուրդի ընթացքում, նրա հիվանդության ժամանակահատվածը չի հաշվարկվում որպես հիմնական կամ լրացուցիչ արձակուրդ:

23. Զինծառայողների ամսական արձակուրդի իրավունքը

Ամսական արձակուրդ տրվում է պայմանագրային զինծառայողներին՝ ծառայության վեց ամիսը լրանալուց հետո, յուրաքանչյուր ամսվա ընթացքում յոթ օրացուցային օրով:

Լրացուցիչ արձակուրդ տրվում է միայն ընտանեկան պայմաններից ելնելով՝ զինծառայողի երեխա ծնվելու կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում:

24. Զինծառայողների արձակման իրավունքը

Ժամկետային ծառայության զինծառայողն ունի շաբաթական մեկ անգամ գնդի տեղակայման վայրից արձակվելու* իրավունք, եթե չունի «զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» կամ «կարգապահական վաշտ ուղարկել» կարգապահական տույժեր: Արձակման

թույլտվություն ստանալու համար զինծառայողները դիմում են իրենց անմիջական պետին:

Արձակում ստացած ժամկետային պարտադիր զինծառայողների ազատ տեղաշարժը սահմանափակվում է կայազորի* տարածքով, քանի որ արձակման գրությունը ուժի մեջ է միայն զինծառայողի կայազորի սահմաններում:

Զինծառայողների արձակումը ստորաբաժանումների միջև կարգավորվում է այնպես, որ չթուլանա մարտական պատրաստությունը և չընկնի մարտական հերթապահության որակը:

25. Ինչպե՞ս է կարգավորվում վնասի հատուցման ընթացակարգը, եթե զինծառայողի հերթապահության ժամանակ վնասվել կամ գողացվել է պետական գույք

Զինծառայողները նյութական պատասխանատվություն են կրում պետությանը հասցված նյութական վնասի համար:

Պատասխանատվություն կրում են միայն իրենց մեղքով պատճառված վնասի համար: Ազատվում են նյութական պատասխանատվությունից, եթե վնասը պատճառվել է հրամանատարների (պետերի) հրամանը կատարելու, օրինաչափ գործողության, անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, արդարացված ծառայողական ռիսկի կամ անհաղթահարելի ուժի հետևանքով: Ծառայողական պարտականություն կատարելիս անզգուշաբար հասցված վնասը հատուցելիս զինծառայողները կրում են սահմանափակ նյութական պատասխանատվություն:

Եթե պատճառված վնասը կապված չէ ծառայողական պարտականության հետ, ապա պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Նյութական վնաս պատճառելու հետ կապված իրավախախտումների դեպքում զինծառայողները հատուցում են վնասն անկախ պատասխանատվության այլ ձևերի ենթարկվելուց կամ հասարակական ներգործության միջոցների գործադրումից:

* *Արձակումը գնդի տեղակայման վայրից կարճ ժամանակով հեռանալու հնարավորությունն է: Շաբաթ և նախատոնական օրերին արձակումը թույլատրվում է մինչև 24.00-ը, իսկ կիրակի և տոնական օրերին՝ մինչև երեկոյան ութը (անվանականչը):*

* *Կայազոր է կոչվում բնակավայրերում կամ դրանցից դուրս մշտապես կամ ժամանակավորապես տեղավորված զորամասերի ամբողջությունը:*

26. Ինչ կարգով է բողոքարկվում վերադասի հրամանը

Զինծառայողին տրվող բանավոր կամ գրավոր հրամանները, ցուցումները պետք է համապատասխանեն դրանք տվողի և կատարողի լիազորություններին:

Անկախ հրամանի օրինական կամ անօրինական լինելուց, ենթական պարտավոր է անվերապահորեն կատարել պետի հրամանները: Հրամանը կատարելուց հետո միայն նա կարող է բողոքել, եթե կարծում է, որ իր նկատմամբ ճիշտ չեն վարվել կամ համաձայն չէ հրամանի հետ:

Վերադասի անօրինական հրամանով կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած անձը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով:

Ակնհայտ անօրինական հրամանը կամ կարգադրությունը չկատարելը բացառում է քրեական պատասխանատվությունը:

Զինծառայողն իրավունք ունի վերադաս հրամանատարներին զեկուցագիր ներկայացնել զինվորական ծառայության անցման հետ կապված հարցերով, ինչպես նաև իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու նպատակով: Զինծառայողը կարող է բողոքարկել տույժի մասին իրեն հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Զեկուցագիր ներկայացրած զինծառայողի նկատմամբ անօրինական կամ անարդար գործողություններ կատարած կամ անգործություն թույլ տված հրամանատարը ենթակա է օրենքով նախատեսված պատասխանատվության: Արգելվում է զինծառայողի կողմից զեկուցագիր ներկայացնելուն խոչընդոտելը, դրա համար պատժելը, նրա պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելը կամ այլ անարդարացի վերաբերմունքը: Արգելվում է նաև խոչընդոտելը խախտված իրավունքների պաշտպանությունը դատական կարգով իրականացնելուն:

Զեկուցագրում ներկայացված հարցերի լուծումը մերժելու դեպքում այդ մասին գրավոր հայտնվում է զինծառայողին՝ նշելով մերժման պատճառները, մերժման համար հիմք համարվող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, պարզաբանելով մերժումը բողոքարկելու կարգը:

27. Ինչ է կարգապահական տույժը

Զինվորական կարգապահության կանոնների խախտման համար օրենքով նախատեսված են կարգապահական տույժեր: Կարգապահական տույժը համարվում է պատասխանատվության միջոց: Այն կիրառվում է զինվորական ծառայության կանոնագրքերի պահանջները պահպանելու ոգով դաստիարակելու և նոր իրավախախտումների կատարումը կանխելու նպատակով:

Կարգապահական տույժը տրվում է գրավոր հրամանով:

Կարգապահական տույժը պետք է համապատասխանի կարգապահական

խախտման ծանրությանը և զինծառայողի մեղքի աստիճանին:

Զինծառայողին նույն կարգապահական խախտման համար մեկից ավելի տույժ չի կարող տրվել: Կարգապահական իրավախախտման համար տույժ չի կարող տրվել, եթե իրավախախտում կատարելու օրվանից անցել է 6 ամիս:

Զինծառայողի կողմից կարգապահական կոպիտ խախտում թույլ տալու, ինչպես նաև հրամանատարի (պետի) կողմից որոշված այլ դեպքերում իրավասու հրամանատարի (պետի) հրամանով նշանակվում է ծառայողական քննություն:

Զինծառայողը, որի նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, իրավունք ունի ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին, առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ ներկայացնել, մինչև քննության ավարտը ծանոթանալ նյութերին՝ ներառյալ կազմված եզրակացությունը: Զինծառայողը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկել այն:

Զինծառայողն իրեն տրված կարգապահական տույժն ըստ վերադասության բողոքարկելու իրավունք ունի:

28. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը ռազմական ոստիկանության և քննչական մարմինների հետ հարաբերություններում

Ռազմական ոստիկանության կամ քննչական մարմինների հետ հարաբերություններում իր իրավունքների խախտումը կանխելու համար կարևոր է տեղյակ լինել դրանք պաշտպանելու եղանակներից:

Ռազմական ոստիկանության կամ քննչական մարմինների կողմից իրականացվող վարույթների շրջանակներում զինծառայողը կարող է ունենալ վկայի, տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ: Կարող է չունենալ վերը նշված կարգավիճակներից ոչ մեկը, եթե դեռևս չկա հարուցված քրեական գործ: Յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է անձին պարզաբանել իր կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները, դրանք չկատարելու հետևանքները, իր մասնակցությամբ իրականացվող գործողությունների կարգը:

Եթե զինծառայողի պահանջելուց հետո իր իրավունքները չեն պարզաբանվում, կամ նույնիսկ պարզաբանումից հետո նա չի կողմնորոշվում իրավունքների և պարտականությունների իրականացման հարցում, դժգոհ է իր նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքից, ապա իրավունք ունի օգտվելու փաստաբանի կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնությունից և իր մասնակցությամբ իրականացվող գործողություններին մասնակցել փաստաբանի հետ:

Օրենքով նախատեսված որոշակի դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Մյուս դեպքերում

փաստաբանի մասնակցությունը պետք է ապահովվի զինծառայողի կողմից և նրա միջոցներով:

Եթե ռազմական ոստիկանության աշխատակիցները կամ քննչական մարմինները որևէ կերպ խոչընդոտում են փաստաբանական օգնություն ստանալու իրավունքին, զինծառայողը կարող է հրաժարվել իր մասնակցությամբ գործողության մասնակցելուց այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացվել փաստաբանի ներկայության խոչընդոտները:

Այսպիսով, իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունքը որևէ սահմանափակման ենթակա չէ վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Այն դեպքում, երբ չկա հարուցված քրեական գործ, և զինծառայողը հրավիրվում է վարույթն իրականացնող մարմնի մոտ բացատրություններ տալու, նա կարող է նաև հրաժարվել դրանից:

29. Ի՞նչ իրավունքներ ունի զինծառայողը վկայի կարգավիճակում

Զինծառայողը որպես վկա կարող է կանչվել, եթե ենթադրվում է, որ նրան հայտնի է քննվող գործին առնչվող որևէ հանգամանք:

Վկան իրավունք ունի՝

1. իմանալ, թե որ քրեական գործով է կանչվում,
2. հրաժարվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ,
3. հրաժարվել նյութեր և տեղեկություններ ներկայացնելուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ դրանք հետագայում կարող են օգտագործվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականների,
4. ցուցմունքներ տալիս վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ օգտվել փաստաթղթերից և իր գրավոր նշումներից,
5. ցուցմունքներ տալիս կազմել պլաններ, սխեմաներ և գծանկարներ,
6. անձամբ շարադրել մինչդատական վարույթի ընթացքում տրվող իր ցուցմունքները,
7. ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը, ըստ դրա՝ իր ցուցմունքների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք պետք է մտցվեն արձանագրության մեջ:
8. ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում,
9. հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով իրենից վերցված գույքը, իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները,
10. քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ:

30. Ի՞նչ իրավունքներ ունի զինծառայողը տուժողի կարգավիճակում

Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը:

31. Ի՞նչ իրավունքներ ունի զինծառայողը կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակներում

Կասկածյալ է այն անձը՝

1. որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով (տես՝ հավելված 10),
2. ում նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված:

Քրեական հետապնդման մարմինն իրավունք չունի կասկածյալի վիճակում ձերբակալվածին պահել 72 ժամից ավելի, իսկ խափանման միջոց կիրառելիս՝ ոչ ավելի, քան 7 օր՝ այդ մասին որոշումը նրան հայտարարելու պահից:

Ձերբակալված կասկածյալն իրավունք ունի հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ: Եթե անհնարին է պաշտպանի մասնակցությունն անհապաղ ապահովել, ապա քննիչը պարտավոր է այդ անել կասկածյալին արգելանքի* վերցնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Կասկածը չհաստատվելու դեպքում կասկածյալը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ:

Մեղադրյալ է այն անձը, ում նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող

* *Արգելանքը գործողություն է, որի ընթացքում սահմանափակվում է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ գործի վերաբերյալ ապացույցներ հավաքելու և ձեռք բերված ապացույցները ստուգելու նպատակով:*

մարմինը կասկածյալին և մեղադրյալին օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանության իրենց իրավունքն իրացնելու հնարավորություն է ընձեռում:

Կասկածյալի և մեղադրյալի կողմից իրենց իրավունքներից օգտվելը կամ դրանից հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս իրենց և որևէ անբարենպաստ հետևանք առաջացնի նրանց համար: Կասկածյալի և մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իրենց տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նրանք հայտարարել են հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

32. Ո՞ր դեպքերում զինծառայողը կարող է բերման ենթարկվել

Բերման ենթարկել՝ նշանակում է քրեական վարույթն իրականացնող մարմնին հարկադրաբար ներկայացնել առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին՝ նրանց նկատմամբ համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար: Դա անելիս բերման ենթարկվող անձի իրավունքներն ու ազատությունները կարող են ժամանակավորապես սահմանափակվել:

Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:

33. Որքա՞ն կարող է տևել հարցաքննությունը

Զինծառայողի հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից ավելի: Հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո թույլատրվում է շարունակել հարցաքննությունը: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ ժամը:

Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել վերը նշվածից ավելի կարճ ժամկետներ:

34. Ինչ կարգով է իրականացվում զորացրումը

Պարտադիր զինծառայողները զինվորական ծառայությունից արձակվում են՝

1. պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու դեպքում,
2. վաղաժամկետ
   ա. պարտադիր զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչվելու դեպքում: Առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին տրամադրվում են նաև նրա առողջական վիճակի


ՅՈՐՔԱՅՐՈՒՄ
1
2
3

վերաբերյալ առկա փաստաթղթերը,

բ. օրենքով սահմանված որոշակի ընտանեկան պայմաններից ելնելով (տես՝ հավելված 8),

գ. զոհվելու (մահանալու) կամ դատական կարգով մահացած ճանաչվելու դեպքում:

35. Ի՞նչ է նշանակում պահեստազոր

Ժամկետային պարտադիր զինվորական, ինչպես նաև այլընտրանքային ծառայությունն ավարտած կամ օրենքով սահմանված կարգով արձակված քաղաքացիները հաշվառվում են պահեստազորում:

Սա զինվորական հաշվառման անբաժանելի մասն է, որի նպատակն է ապահովել խաղաղ ժամանակ պահեստազորային պատրաստության շրջանակներում քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործման և վերապատրաստման գործընթացը, իսկ պատերազմի ժամանակ՝ զորահավաքային զորակոչի պատշաճ իրականացումը:

Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1. վարժական հավաքներ,
2. զինվորական վարժանքներ (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) կամ զորավարժություններ (զորախաղեր),
3. պատերազմական ժամանակի հաստիքներին կցագրված քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով հաստիքով նախատեսված պարտականությունների կիրառում:

Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում պահեստազորի պատրաստության շրջանակներում վարժական հավաքների ծառայությունը համարվում է պահեստազորային զինվորական ծառայություն:

36. Ի՞նչ մեխանիզմներ կան զինված ուժերում ծառայության զորակոչվելու և զինվորական ծառայության մեջ գտնվելու ընթացքում սեփական իրավունքները պաշտպանելու համար

Զինծառայողներն ունեն մի շարք պարտականություններ, որոնք չկատարելու դեպքում, որպես կանոն, սահմանված են որոշակի իրավական հետևանքներ:

Տարաբնույթ իրավական խնդիրներից խուսափելու համար ամենակարևոր պայմաններից է, որ զինծառայողն իմանա իր իրավունքները և տիրապետի այն ընթացակարգերին, որոնք կարգավորում են ծառայությունը:

Ցանկացած իրավիճակում զինծառայողն ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Կարող է դիմել զորամասի իրավաբանին,

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, ցանկացած իրավաբանի, փաստաբանի, զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կամ իրավական աջակցություն ցուցաբերող հասարակական կազմակերպություններին (տես՝ հավելված 9)։ Զինծառայողն ինքն է ընտրում իրավաբանական օգնություն ստանալու եղանակը։

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը կամ դրա իրականացման եղանակի ընտրության իրավունքը սահմանափակման ենթակա չէ։

37. Որո՞նք են այն կառույցները կամ ընթացակարգերը, որոնց միջոցով կարելի է վերականգնել խախտված իրավունքները, ինչպե՞ս և ո՞ր դեպքերում կարելի է նրանց դիմել

Իր իրավունքները խախտող գործողությունները, անգործությունը, հրամանները և որոշումները զինծառայողը կարող է բողոքարկել վերադասության կարգով (զեկուցագիր, դիմում կամ բողոք (տես՝ հավելված 10) ներկայացնելու միջոցով) կամ դատական կարգով։

Վերադասության կարգով բողոքարկումն անձին չի զրկում դատարան դիմելու իրավունքից, եթե բողոքարկումն արդյունք չի տալիս։

Եթե զինծառայողի իրավունքները խախտող գործողությունները կամ անգործությունն իրենց մեջ պարունակում են հանցագործության տարրեր, զինծառայողը պարտավոր է դիմել ոստիկանություն կամ ռազմական ոստիկանություն, դատախազություն կամ զինվորական դատախազություն։

Հավելվածներ

Հավելված 1.
Որոնք են զինված ուժերի անդամներին առնչվող մարդու իրավունքներն՝ ըստ ԵԽ առաջարկությունների

Զինված ուժերի անդամները պետք է ունենան հետևյալ հիմնարար իրավունքներն ու ազատությունները.

- կյանքի իրավունք (հաշվի առնելով, սակայն, զինվորական մասնագիտությանը հատուկ վտանգները)
- խոշտանգումներից և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից պաշտպանվելու իրավունք
- արգելել ստրկությունը, ճորտությունը, այնպիսի առաջադրանքների իրականացումը, որոնք համատեղելի չեն ազգային պաշտպանության ծառայության նրանց հանձնարարությունների հետ և հարկադիր կամ պարտադիր աշխատանքը
- իրավական պաշտպանության իրավունք՝ նրանց իրավունքների խախտման դեպքում, ազատության և անվտանգության իրավունք, անկախ դատարանների կողմից արդար դատական վարույթի իրավունք, ինչպես նաև բողոքարկման իրավունք
- խտրականության արգելում
- մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք
- քաղաքացիական իրավունքների լիակատար իրականացման իրավունք, մասնավորապես, քվեարկելու իրավունք
- սեփականությունը հարգելու իրավունք
- ամուսնանալու և ընտանիք հիմնելու իրավունք:

Զինված ուժերի անդամները պետք է ունենան հետևյալ հիմնարար ազատություններն ու իրավունքները, որոնք, սակայն, կարող են ենթարկվել որոշակի սահմանափակումների.

- արտահայտվելու ազատության իրավունք
- հավաքների և միավորման ազատության իրավունք, այդ թվում՝ արհեստակցական միություններ հիմնելու և քաղաքական կուսակցություններին անդամակցելու իրավունք
- անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության գաղտնիության իրավունք:

Զինված ուժերի անդամների կողմից վերոնշյալ կետերում նշված իրավունքներից օգտվելու և կիրառելու ցանկացած սահմանափակում պետք է բավարարի հետևյալ առանձին չափանիշները.

- դրանք պետք է օրինական նպատակ ունենան, լինեն ճշգրտորեն հիմնավորված կարիքներով և զինվորական կյանքի առանձնահատկություններով, կարգապահությամբ և զորավարժություններով և համեմատական լինեն նպատակների հետ
- դրանք պետք է հայտնի լինեն, նախատեսված և հիմնավոր կերպով սահմանված լինեն օրենքով և համապատասխանեն սահմանադրության

դրույթներին
- չպետք է անհիմն կերպով սպառնալիք ներկայացնեն կամ վտանգեն զինված ուժերի անդամների ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը
- պետք է հարգեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված սահմանները:

Զինված ուժերի անդամները պետք է նաև օգտվեն տնտեսական և սոցիալական իրավունքներից, այդ թվում՝

- պատշաճ և համապատասխան կացարանի/բնակվելու վայրի
- արդարացի վարձատրություն և աշխատանքային կենսաթոշակ ստանալու
- առողջության պահպանման և աշխատանքային անվտանգության
- պատշաճ և բավարար սնվելու իրավունքից:

Զինված ուժերի անդամները պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների վերաբերյալ և ստանան մարդու իրավունքների վերաբերյալ ուսուցում՝ իրազեկվածությունը բարձրացնելու համար:

Հավելված 2.
ՀՀ պաշտպանության նախարարության հետ պայմանագիր կնքելը և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելը

Անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքել պայմանագիր և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության անցնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով:

Զինվորական ծառայության պայմանները և վայրը նախատեսվում են կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պաշտպանության նախարարությունը պայմանագրի պայմաններն առաջարկում է իր կողմից իրականացվող տարբեր ծրագրերի պայմանների հիման վրա: Այդ ծրագրերից են, օրինակ.

«Ես եմ» նախագիծը

«Ես եմ» նախագիծը կոչված է խրախուսելու նրանց, ովքեր իրենք են կայացրել առաջնագծում ծառայություն անցնելու որոշումը: Այն նորակոչիկները, որոնք ցանկություն են հայտնում զինվորական ծառայություն իրականացրել մարտական հերթապահություն իրականացնող զորամասում, իրավունք ունեն անցնելու ծառայության նոր տեսակի՝ ժամկետային պայմանագրային՝ երեք տարով:

«Պատիվ ունեմ» ծրագիրը

«Պատիվ ունեմ» ծրագիրն ուղղված է սպայական մասնագիտության հանդեպ նոր հետաքրքրություն խթանելուն: Գաղափարախոսությունն է՝

բուհական տարկետումը կապել ապագա սպայական ծառայության հետ: Պետական հավատարմագրում ունեցող բուհում սովորող յուրաքանչյուր երիտասարդ իրավունք ունի դիմել այս ծրագրին, որը ենթադրում է բուհական տարկետում ստանալու հնարավորություն վերապահել այն քաղաքացիներն, ովքեր որոշել են երեք տարվա վճարվող սպայական նշանակում ստանալ:

Հավելված 3.
Ռազմաուսումնական հաստատությունում սովորելու հետ կապված կարգավորումներ

Ուսումնառության ընթացքում իր դիմումի համաձայն կամ առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու հիման վրա ռազմաուսումնական հաստատությունից ազատվելու կամ անբավարար առաջադիմության կամ կարգապահական տույժի պատճառով հեռացված 18 տարին լրացած քաղաքացին ուղարկվում է շարունակելու շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունը: Պարտադիր զինվորական ծառայության ժամկետում տվյալ դեպքում հաշվարկվում է միայն առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատությունից ազատված քաղաքացու ուսման, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում ռազմաուսումնական հաստատություն ընդունված զինծառայողի նախկինում ծառայած ժամանակաշրջանը:

Մինչև 18 տարեկանը լրանալը ռազմաուսումնական հաստատությունից ազատված կամ հեռացված քաղաքացիները հաշվառվում են իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժնում և 18 տարեկանը լրանալուց հետո հայտարարված զորակոչի ժամանակ ենթակա են զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության՝ ընդհանուր հիմունքներով:

Հավելված 4.
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալը

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1. բուժման կարիք ունենալու կամ
2. զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական

ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից՝ ճանաչվելով ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է մեկ անգամ՝ երեք տարի ժամանակով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Վերոնշյալ հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստազորում հաշվառված քաղաքացին մինչև 27 տարին լրանալը ենթակա է բժշկական վերափորձաքննության՝ հինգ տարին մեկ անգամ: Բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

Հավելված 5.
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալը

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ
բ. ունեն այլ զավակ, ով անչափահաս է կամ ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ,

2) առանց մոր մեծացող երեխա,
3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների,
4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին,
5) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով)

ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

Եթե քաղաքացին անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխա և որդեգրվել է խնամատար հաստատությունից, և առկա են վերոնշյալ 1-ին կամ 5-րդ կետերով նախատեսված պայմանները, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից: 5-րդ կետի դեպքում ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաև խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

Վերը նշված 1-ին կետի իմաստով քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

1. մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած,
2. մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող,
3. մինչև քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են և բնակվում են առանձին,
4. ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, և բնակվում են առանձին:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից այլ դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

Վերը նշված 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը, իսկ 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչև երկրորդ երեխայի կամ առնվազն զույգ երեխաների ծննդյան օրը: Վերը նշված 1-ին և 2-րդ մասերով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա 27 տարին լրանալու օրը: Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Վերոնշյալ բոլոր դեպքերում քաղաքացին համարվում է տարկետման իրավունքը կորցրած, եթե նրա մոտ վերացել են տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները:

Քաղաքացին պարտավոր է ստացած տարկետումից հետո յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնել տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերը:

Հավելված 6.
Նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու հիմքերը

Նպատակային ուսումնառության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն, եթե նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Այդ դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 26 տարին լրանալու օրը,
2. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին: Նշված հիմքով քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

Հավելված 7.
Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու համար արգելք հանդիսացող, ինչպես նաև լրացուցիչ արձակուրդի իրավունք տվող ընտանեկան պայմաններ

Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ չի կարող ընդգրկվել այն զինծառայողը՝

1. որը հանդիսանում է 63 տարին լրացած կամ երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (եթե սահմանված չէ ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակում) ունեցող ծնողների (միայնակ ծնողի) միակ զավակը,
2. ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած)

հայր (մայր) կամ եղբայր (քույր),
3. ամուսնացած է և ունի մեկ երեխա,
4. ում ծնողները մահացած են,
5. մեկ ծնողը մահացած է և այդ զինծառայողն ընտանիքի միակ զավակն է, կամ ընտանիքի մյուս զավակներն անչափահաս են, կամ ընտանիքի մյուս զավակները չափահաս են և ունեն հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անգործունակ:

Վերը նշված կետի իմաստով քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

1. մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած,
2. մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող,
3. մինչև քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են և բնակվում են միմյանցից առանձին,
4. ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

Վերը նշված պայմանները հանդիսանում են նաև պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողին լրացուցիչ արձակուրդ տրամադրելու հիմքեր:

Հավելված 8.
Պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու հիմք հանդիսացող ընտանեկան պայմաններ

Պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու իրավունք ունի այն զինծառայողը, ով ունի՝

1. 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝
   ա. չունեն այլ զավակ կամ
   բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ,
2. առանց մոր մեծացող երեխա,
3. երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների,
4. երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին,
5. մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության

առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

Վերը նշված 1-ին մասի 5-րդ կետի իմաստով՝ ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաև խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

Վերը նշված 1-ին մասի 1-ին կետի իմաստով քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

1. մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած,
2. մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող,
3. մինչև քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են և բնակվում են առանձին,
4. ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

Եթե առկա են պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու այլ հիմքեր, որոնք նախատեսված չեն վերը նշված կետերում, քաղաքացին զինվորական ծառայությունից կարող է արձակվել նաև իր դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

Օրենքով սահմանված որոշակի ընտանեկան պայմաններից ելնելով պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը չի տարածվում այն զինծառայողների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքել են պայմանագիր և զինվորական ծառայության են անցնել ՊՆ կողմից նշված վայրում և պայմաններում (տես՝ հավելված 2):

Հավելված 9.
Կառույցներ, ուր կարելի է ներկայացնել բողոքներ զորակոչի կամ զինվորական ծառայության ընթացում իրենց կամ իրենց հարազատների իրավունքների ոտնահարման դեպքերը կանխելու համար

Պետական մարմիններ՝

ՀՀ պաշտպանության նախարարության թեժ գիծ
Հեռ. համար՝ 1-28

ՀՀ դատախազություն
Հեռ. համար՝ +374 (10) 511-650
Ղեկավարի անուն, ազգանուն՝ Արթուր Դավթյան
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 5 շենք
Էլ. հասցե՝ info@prosecutor.am

ՀՀ քննչական կոմիտե
Հեռ. համար՝ +374 (11) 880-156
Ղեկավարի անուն, ազգանուն՝ Հայկ Գրիգորյան
Հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
Էլ. հասցե՝ press@investigative.am

Մարդու իրավունքների պաշտպան
Հեռ. համար՝ +374 (10) 537-651
Ղեկավարի անուն, ազգանուն՝ Արման Թաթոյան
Հասցե՝ ք. Երևան, Պուշկին 56ա
Էլ. հասցե՝ ombuds@ombuds.am

Հասարակական կազմակերպություններ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ
Հեռ. համար՝ + 374 93820632; + 374 55820632; + 374 (322) 21340
Ղեկավարի անուն, ազգանուն՝ Էդգար Խաչատրյան
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002, ք. Վանաձոր;
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ
Էլ. հասցե՝ admin@safesoldiers.am; ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
Կայք՝ www.peacedialogue.am; www.safesoldiers.am

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Հեռ. համար՝ +374 (322) 4 22 68; +374 (10) 54 40 53
Ղեկավարի անուն, ազգանուն՝ Արթուր Սաքունց
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2001,
ք. Վանաձոր; Տիգրան Մեծի 59
Էլ. հասցե՝ hcav@hcav.am
Կայք՝ www.hcav.am

Հայաստանի Հելսինկյան Կոմիտե
Հեռ. համար՝ +374 (10) 56-03-72; +374 (10) 56-14-57
Ղեկավարի անուն, ազգանուն՝ Ավետիք Իշխանյան
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Պուշկինի փ. 3ա
Էլ. հասցե՝ info@armhels.com
Կայք՝ http://www.armhels.com

«Հելսինկյան ասոցիացիա»
Հեռ. համար՝ +374 (10) 585-372
Ղեկավարի անուն, ազգանուն՝ Նինա Կարապետյանց
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան փողոց 33 շենք, 8-րդ բնակարան
Էլ. հասցե՝ hahr.yerevan@gmail.com
Կայք՝ www.hahr.am

Հավելված 10.
Դիմում-բողոքի օրինակելի ձև

_____
Այն մարմնի ղեկավարի անուն-ազգանունը, որին ուղղված է դիմումը

Դիմող՝ _____
Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն

_____
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

_____
Հասցե, հեռախոսի համար

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի պարոն/տիկին _____,
_____

Խնդրի հակիրճ նկարագրությունը՝ էական փաստերի, հանգամանքների ներկայացմամբ
_____
_____
_____:
Պահանջը հիմնավորող իրավական նորմերը և դրանց համառոտ շարադրանքը
_____
_____
_____
_____
_____:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ _____
_____
_____
_____
_____:
Դիմումով ներկայացվող խնդրանքը/պահանջը

Կից ներկայացնում եմ ՝
1. _____
2. _____
Նշել կցվող փաստաթղթերը (անձը հաստատող փաստաթղթի պատճեն, խնդրին առնչվող փաստաթղթեր):

Դիմող _____
Անուն, ազգանուն

«_____» _____ 2018թ.

Հավելված 11.
Ո՞ր արարքներն են համարվում զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններ

ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները, որոնց համար նախատեսված է քրեական պատասխանատվություն: Այդ հանցագործություններն են.

1. Հրամանը չկատարելը,
2. Պետին դիմադրելը կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն հարկադրելը,
3. Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը,
4. Ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը,
5. Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում,
6. Զինծառայողին վիրավորանք հասցնելը,
7. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը,
8. Դասալքությունը,
9. Անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը,
10. Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը,
11. Զինծառայողի կողմից մոլեխաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը,
12. Զինծառայողի կողմից թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ ապօրինի գործածելը,
13. Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը,
14. Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը,
15. Պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը,
16. Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը,
17. Հասարակական կարգը պահպանելու կամ հասարակական անվտանգությունն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը,
18. Ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը,
19. Ռազմական գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը,
20. Ռազմական գույքը յուրացնելը կամ վատնելը,
21. Ռազմական գույքը կորցնելը կամ փչացնելը,
22. Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը,
23. Զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը,
24. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը,
25. Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ,
26. Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը,
27. Թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը,
28. Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը,
29. Մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը,
30. Կամովին գերի հանձնվելը,
31. Հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից,
32. Դիակապտությունը:

Իրավական հիմքեր

1. Ի՞նչ է պարտադիր զինվորական ծառայությունը

- ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 14-րդ հոդվածի 3-րդ մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս:

2. Ո՞վ է անցնում պարտադիր զինվորական ծառայություն

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մաս:

3. Որքա՞ն է պարտադիր զինվորական ծառայության ժամկետը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ մասեր:

4. Ինչպե՞ս է հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված:

5. Ի՞նչ է զորակոչը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետ,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետ,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված,
- ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդված:

6. Գոյություն ունի՞, արդյոք, պարտադիր զինվորական ծառայությանն այլընտրանք

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մաս,
- «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված:

7. Որո՞նք են այլընտրանքային ծառայության անցնելու հիմքերը և կարգը

- «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված,
- «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված:

8. Ինչպե՞ս կարելի է ձեռք բերել զինվորական մասնագիտություն

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մաս:

9. Իրավունքների և ազատությունների պաշտպանության ի՞նչ երաշխիքներ ունեն զինծառայողները

- ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 48-րդ հոդվածի 1-ին մաս,

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս,
- «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս,
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 6-րդ, 7-րդ կետեր:

10. Առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասեր,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասեր:

11. Ինչպե՞ս է որոշվում զինապարտի կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս:

12. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու արգելքները

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասեր:

13. Ո՞ր դեպքերում քաղաքացին կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ մասեր,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մաս:

14. Որո՞նք են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքերը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված:

15. Հնարավո՞ր է, արդյոք, ծառայել եղբոր հետ նույն զորամասում

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մաս:

16. Ի՞նչ կարգով է որոշվում զինծառայողի ծառայության վայրը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ մասեր,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասեր:

17. Մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու արգելքը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասեր,
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 365-րդ կետ:

18. Ի՞նչ անել, եթե զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի մոտ առաջացել են բողոքներ առողջական վիճակի վերաբերյալ

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ

օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մաս,
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 236-րդ, 337-րդ, 350-րդ, 351-րդ, 352-րդ, 357-րդ կետեր:

19. Կարո՞ղ են, արդյոք, զինծառայողները գնալ արձակուրդ
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասեր,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված,
- «Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս զինծառայողների, ինչպես նաև նրանց ուղեկցող ընտանիքի անդամների՝ տրանսպորտից օգտվելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 06.05.2004թ. N 886-Ն որոշում:

20. Զինծառայողների հիմնական արձակուրդի իրավունքը
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետ:

21. Զինծառայողների լրացուցիչ արձակուրդի իրավունքը
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մաս:

22. Զինծառայողներին հիվանդության պատճառով տրվող արձակուրդի իրավունքը
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ, 10-րդ, 11-րդ մասեր:

23. Զինծառայողների ամսական արձակուրդի իրավունքը
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 12-րդ մաս:

24. Զինծառայողների արձակման իրավունքը
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 246-րդ, 247-րդ կետեր:

25. Ինչպե՞ս է կարգավորվում վնասի հատուցման ընթացակարգը, եթե զինծառայողի հերթապահության ժամանակ վնասվել կամ գողացվել է պետական գույք
- «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 4-րդ հոդվածներ,
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 28-րդ, 30-րդ կետեր:

26. Ի՞նչ կարգով է բողոքարկվում վերադասի հրամանը
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 46-րդ, 47-րդ հոդվածներ,
- Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետեր:

27. Ի՞նչ է կարգապահական տույժը
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական

կանոնագրքի 22-րդ, 27-րդ հոդվածներ:

29. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը վկայի կարգավիճակում

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասեր:

30. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը տուժողի կարգավիճակում

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդված:

31. Ինչ իրավունքներ ունի զինծառայողը կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակներում

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասեր,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ մասեր,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մաս,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մաս,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին, 3-րդ:

32. Ո՞ր դեպքերում զինծառայողը կարող է բերման ենթարկվել

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2051-րդ հոդված:

34. Ինչ կարգով է իրականացվում զորացրումը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասեր:

35. Ինչ է նշանակում պահեստազոր

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասեր,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մաս:

Հավելված 3. Ռազմաուսումնական հաստատությունում սովորելու հետ կապված կարգավորումներ

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մաս:

Հավելված 4.Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-4 մասեր:

Հավելված 5.Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-5 մասեր, 8-րդ մաս:

Հավելված 6. Նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու հիմքերը

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մաս:

Հավելված 7. Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում

մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու համար արգելք հանդիսացող, ինչպես նաև լրացուցիչ արձակուրդի իրավունք տվող ընտանեկան պայմաններ

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մաս,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մաս:

Հավելված 8. Պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու հիմք հանդիսացող ընտանեկան պայմաններ

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ¦ ենթակետ,
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասեր:

Հավելված 11. Ո՞ր արարքներն են համարվում զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններ

- Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 356-383 հոդվածներ:

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության մասին

«Խաղաղության երկխոսությունը» ոչ կրոնական, ոչ քաղաքական, իրավապաշտպան, խաղաղասիրական հասարակական կազմակերպություն է: Հիմնադրվել է 2009թ., Հայաստանում: Կազմակերպությունը միավորում է Արևելյան գործընկերության երկներում, Ռուսաստանի Դաշնությունում և Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող փորձառու իրավապաշտպաններին ու խաղաղության կառուցման ուղղությամբ գործունեություն ծավալող ակտիվիստներին՝ մարդու իրավունքների պաշտպանության և հակամարտությունների խաղաղ կարգավորման նպատակով:

Կազմակերպությունը գործունեություն է ծավալում տեղական, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում:

Կազմակերպության տեսլականն է՝ խաղաղ և ժողովրդավար հասարակություններում իրավունքի ու օրենքի գերակայություն:

Առաքելություն. Հակամարտող և հետկոնֆլիկտային հասարակություններում կազմակերպությունն իր տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ծավալած գործունեությամբ ձգտում է նպաստել՝

- բազմաշերտ երկխոսության ձևավորմանը,
- մարդու իրավունքների պաշտպանությանը,
- խաղաղասիրական շարժման ու խաղաղության մշակույթի ձևավորմանը,
- ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորմանը,
- ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանն ու հզորացմանը: